

Dora Sakayan. Modern Western Armenian: For the English-speaking World, A Contrastive Approach. Montreal: Aron Books, 2000.

Դորա Սաքայանի «Ժամանակակից արևմտահայերեն» դասագիրքը գրված է, ինչպես հուշում է ենթավերնագիրը, «անգլիախոս աշխարհի համար, զուգադրական մոտեցմամբ», և արդեն լայն արձագանք է գտել արևմտահայ հայագետների ու լեզվաբանների շրջանում. գրվել են բազմաթիվ դրվատական գրախոսականներ, որոնք ըստ ամենայնի բարձր են գնահատել աշխատանքը: Սակայն Հայաստանի մեջ գիրքը քչերին է հայտնի, ուստի ունի ներկայացման ու գնահատանքի կարիք նաև մեզանում:

Հայտնի է, որ սփյուռքահայերի խոսքը ներկայումս, կախված նրանց կյանքի հանգամանքներից՝ բնակության երկրից, ընտանեկան, հասարակական, կրթական կարգավիճակից, նախնիների բարբառային պատկանելությունից և այլն, աչքի է ընկնում սոցիալա-

կան, ոճական, բարբառային-տարածական բազմազանությամբ, պրևելաիայ և արևմտահայ լեզուների փոխներթափանցման տարբեր աստիճաններով, երկրի պաշտոնական լեզվից կրած ազդեցություններով, ինչպես նաև գործածության ոլորտի այլևայլ սահմանափակումներով: Այս առումով առաջին հերթին պետք է նշել գրքի ամենակարևոր արժանիքներից մեկը՝ նրա միասնականացնող բնույթը, քանի որ այն ներկայացնում է ժամանակակից գրական արևմտահայերենի անխառն ու նորմավորված վիճակը, թեև միաժամանակ գրքում մեծ տեղ է տրվում կենդանի խոսակցական ձևերին ու արտահայտություններին: Մյուս արժանիքը պետք է համարել դասագրքի բազմակողմանի ընդգրկումը, որն արտացոլված է նրա կառուցվածքում:

Գրքի հիմնական նյութը բաժանված է տասներկու դասերի, որոնցից առաջին չորսն ունի տասներկու բաժին՝ Երկխոսություն,

Բնագիր, Նոր բառեր ու արտահայտություններ, Բառերի թեմատիկ խմբեր, Զերականություն, Անգլերեն-հայերեն զուգադրություն, Բառակազմություն, Ուղղագրություն, Գիր, Վարժություններ, Առածանի: Հինգերորդ դասից սկսած՝ ավարտվում է Գիր բաժինը՝ հայերեն տառերի ձեռագիր գեղագրական ներկայացումը, և մնում են թվարկած տասնմեկ բաժինները: Ներածությունը ներկայացնում է գրքի կառուցվածքը, և յուրաքանչյուր բաժնի նպատակը, ինչպես նաև պարունակում է հայերենի այբուբենը՝ արտասանությամբ և անգլերենին հարմարեցված տառադարձությամբ: Գիրքն օժտված է նաև բավականին հարուստ հավելվածներով՝ բազմազան բովանդակությամբ ընթերցանության նյութերով, առօրյա գործածական արտահայտությունների մի ստվար ցուցակով, քերականական աղյուսակներով, հայերեն-անգլերեն ու անգլերեն-հայերեն բառարաններով և վերջապես լեզվաբանական տերմինների առարկայական ցանկով: Այս ամենը հնարավորություն է տալիս սովորողին՝ ձեռքի տակ ունենալու բավական հարուստ լեզվական նյութ և չդիմելու լրացուցիչ այլ աղբյուրների, որ անշուշտ դժվար կլինեն սկսնակների համար: Բացի այդ, թե՛ հավելվածում ներկայացված նյութերը, թե՛

բուն դասերի երկխոսություններն ու բնագրերը արժեքավոր են ճանաչողական ու մշակութաբանական տեսակետից, քանի որ ծանոթացնում են հայ գրականության և բանահյուսության հետաքրքրական նմուշներին և պատկերացում են տալիս հայ կյանքի ու հայերի հոգեբանության մասին:

Ուսուցման դժվարությունները հաղթահարելուն նպաստում է նաև յուրաքանչյուր դասում տրված քերականական նյութի զուգադրական (հակադրական) քննությունը անգլերեն քերականական կառուցվածքի համապատասխան նյութի հետ: Այստեղ առանձնապես կարևոր է այն երևույթների մատնանշումը, որոնք չունեն անգլերեն համարժեքներ կամ խիստ տարբերվում են արտահայտման ձևով և հատուկ բացատրությունների կարիք են զգում, օր.՝ հայերենի միակազմ նախադասությունների կառուցվածքը, այլ խոսքի մասերի գոյականացումը, դերբայների հոլովումը և այլն: Մյուս կողմից՝ այս հատվածներն ունեն նաև տեսական լեզվաբանական մշանակություն՝ որպես տիպաբանորեն միմյանցից բավական տարբերվող լեզվական կառուցվածքների զուգադրական քննության մեթոդի ու սկզբունքների մշակում և գործնական կիրառություն: Այս կապակցությամբ կուզենայինք նշել նաև,

որ գիրքը զուգակցում է մատչելիությունը գիտական ճշգրիտ շարադրանքի հետ և նկարագրության մանրամասնությամբ ու լեզվական նյութի սխտեմատիկ ներկայացմամբ դուրս է գալիս գործնական ձեռնարկի շրջանակներից և մոտենում արևմտահայերենի գիտական քերականությանը, որի կարիքը նույնպես խիստ զգացվում է արդի հայագիտության մեջ: Սրանով հանդերձ դասագիրքը հավատարիմ է մնում իր գործնական նպատակներին և կիրառում յուրահատուկ մեթոդիկա՝ ուսուցման գործընթացը առավելագույն չափով դյուրացնելու համար, որ շատ կարևոր է լեզվական անմիջական շփումներից կտրված ուսուցման դեպքում: Սյսպես, դասագրքի բոլոր երկխոսությունները, մինչև 6-րդ դասի բնագրերը, բառացանկերը, ինչպես նաև հավելվածի բառարանները, ունեն հայերեն բառերի լատինական տառադարձումներ, ընդ որում տրվում են արտասանական բոլոր նրբերանգները, գաղտնավանկերը և այլն: Մեծ ուշադրություն է դարձված կենդանի խոսակցական լեզվին, աշխույժ երկխոսություններով և հավելվածի առօրյա հաճախադեպ արտահայտությունների բառարանով, որոնք արդեն ունեն պատրաստի բանաձևերի արժեք և մեծապես նպաստում են անմիջական հա-

ղորդակցական կարողությունների ձևավորմանը: Դրան է ծառայում նաև վարժությունների լավ մտածված բաժինը, որտեղ նույնպես բավական տեղ է հատկացված խոսք կազմելու հմտությունների զարգացմանը, միաժամանակ, ուշադրություն է դարձվում քերականական գիտելիքների ամրապնդմանը: Պետք է նշել, որ գրքում տրված վարժություններն առատ են, բազմազան և բավականաչափ հետաքրքրաշարժ: Ընդհանուր առմամբ թե՛ վարժությունների համակարգը, թե՛ դասերի կառուցվածքն ու լեզվական նյութի մատուցումը ներկայացված են լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդաբանական սկզբունքների հմուտ կիրառմամբ: Եվ այս ամենը ավելի է ընդգծում գրքի արժանիքները և այն նշանակալից դերը, որ նա կոչված է խաղալու սփյուռքում հայապահպանության գործում:

Մնում է միայն ցանկություն հայտնել, որ հեղինակը նույնպիսի մի դասագիրք կազմի նաև արևելահայերենի համար, քանի որ Գայաստանից վերջին տարիներին արտերկիր մեկնած զանգվածները նույնպես հայերենը կորցնելու վտանգին են ենթարկվում:

Անշուշտ դասագրքի նշանակությունը միայն դրանով չի սպառվում, այն ունի նաև գիտական մեծ արժեք և ընդառաջ է գնում արտա-

սահմանյան լեզվաբանների ու բանասերների շրջանում հայերենի նկատմամբ հարատևորեն աճող հետաքրքրությանը: Հայերենի ուսումնասիրության ավանդական բնագավառներին՝ համեմատական քերականությանը, լեզվի պատմությանն ու բարբառագիտությանը ներկայումս ավելանում է նաև ժա-

մանակակից գրական տարբերակների բազմակողմանի հետազոտությունը, որի շնորհիվ ամբողջականում է պատկերացումը հայոց լեզվի ծագման, զարգացման, կառուցվածքի ու գործառության մասին:

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ